Ձև № 2
ՀՀ պաշտպանության նախարարություն

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի հերթական համարը	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1.	Ստեղծել ռազմաքաղաքական իրավիճակին, ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսվող) մակարդակին և հավանական ռազմական գործողությունների բնույթին համապատասխանող զինված ուժեր	1.1 ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների փոփոխությունների իրականացում, գործառույթների հստակեցում ու բաշխում	Շարունակվում են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների փոփոխությունները, գործառույթների հստակեցման, բաշխման և զորամիավորումների, միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կազմկառուցվածքի վերանայման աշխատանքները (կազմավորվել են նոր ստորաբաժանումներ, իրականացվել են հաստիքային և հաշվեցուցակային փոփոխություններ /հաստիքների կրճատում և վերահայտարարում, նոր հաստիքների բացում/): 2024թ. հունվարին ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ զինված ուժերի նոր կառուցվածքը: Իրականացվում են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակման աշխատանքները:		
		1.2 Զորամիավորումների, միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կազմկառուցվածքի վերանայում			
		1.3 ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում			
2.	ՀՀ զինված ուժերի համալրում ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	2.1 ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների համալրում վերանայված կազմկառուցվածքին համապատասխանող սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	2024 թվականին մատակարարվել են՝ ԱԹՍ-ների լրակազմեր, տրանսպորտային միջոցներ և ավտոմոբիլային տեխնիկա, ՀՕՊ, հրետանային, ինժեներական, կապի, ռադիոէլեկտրոնային պայքարի, հրաձգային միջոցներ, զինամթերք, կառավարման համալիրներ, քողարկման միջոցներ, տեսադիտարկման սարքեր, անհատական պաշտպանության և այլ միջոցներ:		

3.	ԶՈՒ կառավարման համակարգի արդիականացում և կառավարման արդյունավետության բարձրացում	3.1 Շարունակել կապի համակարգի կատարելագործումը	2024թ. ընթացքում շարունակվել են զինված ուժերի առաջնագծի լարային, «IP», ռադիոկապի և տեսադիտարկման համակարգերի ընդլայնման աշխատանքները, փռվել են նոր օպտիկամանրաթելային և դաշտային մալուխներ, տեղադրվել են վերահաղորդիչներ և կոմուտատորներ: Իրականացվել են հիմնական և ռեզերվային ռադիոցանցերի կազմակերպման և ստեղծման աշխատանքները: Նշված աշխատանքների արդյունքում բարելավվել է ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի դիրքերի թվային կապի համալրվածությունը և բարձրացվել է մարտական դիրքերի հետ լարային կապի ապահովվածությունը: Կապի և տեսադիտարկման համակարգերով կահավորվել են մի շարք ամրաշինական կառույցներ:		
		3.2 Շարունակել կառավարման ավտոմատացված համակարգի (ստացիոնար և շարժական տարրերով) արդիականացման աշխատանքները՝ զորատեսակների և ծառայությունների ղեկավարման ենթահամակարգերով	Կառավարման ավտոմատացված համակարգի արդյունավետության բարձրացման շրջանակներում մշակվում է մոդելավորման նոր համակարգ, իրականացվել են համակարգի սերվերի տեղադրման և համապատասխան մոնտաժման աշխատանքներ: Ներդրվել են ավտոմատացված աշխատանքային տեղեր, իրականացվել է համակարգում ներդրված ծրագրային և սարքածրագրային համակարգերի արդիականացում, հատկացվել է սարքածրագրային միջոցների նոր խմբաքանակ: «Առողջապահության ազգային օպերատոր» ՍՊԸ կողմից մշակվել և ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատում ներդրվել է միասնական կառավարման ավտոմատացված համակարգի «Համալրում» բաղադրիչը, որի շրջանակներում իրականացվում են պահեստազորայինների հաշվառման տվյալների ներբեռնման աշխատանքներ ավտոմատացված համակարգ: ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումներում ներդրվել է «ԱրՄեդ» համակարգը և զինապարտների ուղեգրման աշխատանքներն իրականացվում են նշված համակարգի միջոցով:		
		3.3 Բարձրացնել հրամանատարների դերը, ստորաբաժանումների ինքնավարությունը, անձնակազմի շարժառիթավորվածությունն ու նախաձեռնողականությունը:	Արհեստավարժ սերժանտների ինստիտուտի կայացման առնչությամբ նախաձեռնվել է օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների փաթեթի կազմում, զուգահեռաբար՝ մշակվել են ջոկի հրամանատարից մինչև ԶՈՒ ԳՇ սերժանտի պարտականությունները, արժեհամակարգային բնութագրիչները, կոչումները, տարբերանշանները, կրթական ծրագրերը: Ներկայումս ընթացքի մեջ են կորպուսի և բրիգադի սերժանտների պատրաստման դասընթացները:		
4	Պաշտպանության ոլորտի ռազմավարական պլանավորման համակարգի	4.1 Իրականացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և կազմել պետության պաշտպանության համար մեկ միասնական	Կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքներով մշակվել և Անվտանգության խորհրդի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման նոր պլանը»:		

	ստեղծում, համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացում	մտահղացում, ոլորտի Պետության պաշտպանության պլանավորման փաստաթղթերի մշակման համար (ՀՈՒ կիրառ-ման պլան, ՀՈ ծավալման պլան, ՀՈՒ զարգացման պլան, Տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլան, Հորահավաքային պլան և այլն)			
		4.2 Մշակել և Անվտանգության խորհրդի հաստատմանը ներկայացնել նոր ռազմական դոկտրինի նախագիծը	Ռազմական դոկտրինի մշակման աշխատանքները կմեկնարկեն գործող Ազգային անվտանգության ռազմավարության վերանայումից հետո: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում արմատական համակարգային բարեփոխումների իրականացման հիմնական ուղենիշների սահմանման նպատակով մշակվել, Անվտանգության խորհրդի որոշմամբ հավանության արժանացել և հրապարակվել է «Բանակի կերպափոխման հայեցակարգը»: Ընթանում են հայեցակարգից բխող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները:		
		4.3 «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ	Նախատեսված օրենսդրական ակտերն ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2022թ. հուլիսին:		

		օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Վարչապետի աշխատակազմ			
5.	Գործող զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության, պահեստազորայինների հաշվառման և զորահավաքի համակարգի համապատասխանեցում արդի պահանջներին	5.1. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի համակարգի վերանայում, պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործում	Վերանայվել է ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կառուցվածքը, համաձայն որի հաստատվել է նոր հաստիքացուցակը և փոփոխություն է կատարվել ծառայության կանոնադրությունում: Մշակվել և շրջանառվել է «Զորահավաքային ամրագրման» նոր կարգի վերաբերյալ կառավարության որոշման նախագիծը: Մշակվել և դրվել է շրջանառության ՀՀ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների զորահավաքային մասնագետների պատրաստման (վերապատրաստման) ծրագիրը: Պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործման համատեքստում ընդլայնվել է վարժական հավաքների անցկացման շրջանակը՝ ընդգրկելով մի քանի անգամ ավելի պահեստազորայիններ: Առանձնակի ուշադրություն է դարձվել մարտական հերթապահության ներգրավմամբ վարժական հավաքների անցկացմանը: Հաշվի առնելով նոր ձեռքբերված սպառազինությունը և ռազմական տեխնիկան, պահեստազորում չհաշվառված հատուկ մասնագիտությունների կուտակման նպատակով պահեստազորայինների պատրաստման և վերապատրաստման վարժական հավաքներին ընդգրկված պահեստազորայինները ծանոթացել են այդ բնագավառի սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր տեսակներին, նրանց շահագործման և մարտական կիրառման խնդիրներին, ձեռք են բերել զինվորական հաշվառման նոր մասնագիտություններ: Պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործման նպատակով սահմանվել է ակտիվ պահեստազորային ծառայության սկզբունքը, որի ներդրման նպատակով որոշվել են այն զորամասերը (ստորաբաժանումները) և պաշտոնները, որտեղ նպատակահարմար է ներդնել ակտիվ պահեստազորային ծառայությունը, ինչպես նաև սահմանվել է ակտիվ պահեստազորային ծառայության ներգրավվող անձնակազմի թվաքանակը:		

		5.2 Ստեղծել քաղաքացիների հաշվառման միասնական բազա	Միասնական կառավարման ավտոմատացված համակարգի «Համալրում» բաղադրիչի ներդրման շրջանակներում ՊՆ զինվորական կոմիսարիատներից մեկում շարունակվում են պիլոտային ծրագրով պահեստազորայինների հաշվառման տվյալների՝ կառավարման ավտոմատացված համակարգ ներբեռնման աշխատանքները, ինչպես նաև բոլոր զինվորական կոմիսարիատներում տեղադրվել է «Համալրում» ծրագրի մեկական կետ: Թվով 2 զինվորական կոմիսարիատներում իրականացվում են զորահավաքային ռեսուրսների թվայնացման աշխատանքներ «Համալրում» բաղադրիչում ներբեռնման նպատակով:		
6.	ՀՀ-ում տարածքային պաշտպանության համակարգի ներդնում	6.1 «Պաշտպանության մասին» և այլ անհրաժեշտ ՀՀ օրենքներում կատարել փոփոխություններ և լրացումներ, ստեղծել տարածքային պաշտպանության կառավարման մարմին	Կազմավորվել է Տարածքային պաշտպանության զորքերի հրամանատարությունը և հաստատվել է դրա կանոնադրությունը, գործողության են դրվել տարածքային պաշտպանության ստորաբաժանումների հաստիքացուցակները և հաստիքային հաշվեցուցակները: 2024թ. իրականացված վարժական հավաքների շրջանակներում պահեստազորայինների համալրումը իրականացվել է բացառապես տարածքային սկզբունքով: Սահմանվել են Տարածքային պաշտպանության բրիգադների մշտական և ժամանակավոր տեղակայման վայրերը:		
7.	Ռազմական ենթակառուցվածքի օպտիմալացում և զորքերի տեղակայման վայրերի բարելավում	7.1 Ռազմական ենթակառուցվածքն ու զորքերի տեղակայման վայրերը համապատասխանեցնել նորմատիվային պահանջներին	Օպտիմալացվում են զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերը: ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկռում առկա զորանոցաբնակելի ֆոնդի օպտիմլացման և բարելավման նպատակով իրականացվում են վերակառուցման, վերանորոգման, կառուցման աշխատանքներ: Սյունիքի մարզի թվով 4 համայնքների և Գեղարքունիքի մարզի թվով 2 համայնքների զինավաններից թվով 4-ը հանձնվել են շահագործման, իսկ մյուս 2-ը նախատեսվում է հանձնել՝ 2025թվականին: Շինարարական աշխատանքներ են իրականացվել թվով 24 պաշտպանական կրակակետերի համակարգերում, որոնցից թվով 4-ը հանձնվել է շահագործման : ՀՀ ՊՆ կարիքների համար ձեռք են բերվել կամ վերադարձվել տարբեր նշանակության տարածքներ: Սահմանված ընթացակարգերով աշխատանքներ են տարվում նոր տարածքների ձեռքբերման ուղղությամբ: Ճանապարհային ցանցի զարգացման ուղղությամբ իրականացվել են ռազմական ճանապարհների (հիմնանորոգմամբ և խճապատմամբ), փոս-ճանապարհների և պաշտպանիչ հողաթմբերի կառուցման աշխատանքներ: Մարտական հենակետերում սարքավորվել են տարբեր տեսակի հավաքովի գետնատնակներ, անհատական թաքստոցներ, հրամանատարական դիտակետեր, մարտական դիրքերում անձնակազմի կենցաղային բարելավման նպատակով կառուցվել են քարե կացարաններ: ԶՈՒ պաշտպանության գոտում շահագործման են հանձնվել		

			ամրացված շրջաններ, իրականացվել են ամրացված շրջանների նախագծման աշխատանքներ: Ռազմական ենթակառուցվածքներն ու զորքերի տեղակայման վայրերը նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով իրականացվել են շենք-շինությունների և ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման, տարածքների բարեկարգման, հողանցման եզրագծերի վերանորոգման, շանթարգելների կառուցման և տեղադրման, ախտահանման և մակաբույծների ոչնչացման, ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման, զինավանների կահավորման, անշարժ գույքի ձեռքբերման և ամրացման, զորամասերը նյութական միջոցներով ապահովման, ձմռան նախապատրաստման, զորքերի կենսագործունեության ապահովման նպատակով էլեկտրական սարքավորումների նորոգման, իսկ խնայողության նկատառմամբ՝ արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրման աշխատանքներ:		
8.	Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում, հրամանատարիդերի բարձրացում, զինվորական կարգապահության ապահովում և ոչ կանոնադրական հարաբերությունների նվազեցում	8.1 Զինված ուժերում զարգացնել զինծառայողի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը: Բարձրացնել զինվորական կարգապահության մակարդակը և նվազագույնի հասցնել ոչ կանոնադրային հարաբերությունները Զինված ուժերում	Զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ զինծառայողների մոտ գաղափարական համոզմունքներ ձևավորելու նպատակով մշակվել և զորամասեր են ուղարկվել տեղեկատվական-քարոզչական 116 թեմատիկ նյութեր: Պատրաստվել և համապատասխան հանձնարարականներով ԶՈՒ զորամիավորումներ ու զորամասեր են առաքվել մի շարք շրջաբերականներ՝ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների, մարմնական վնասվածքներ ծնող դեպքեր-պատահարների կանխարգելման ուղղությամբ: Զորամասերում բարոյահոգեբանական ապահովման ուղղությամբ իրականացվել են վերահսկողության և հրամանատարությանը մեթոդագործնական օգնության ցուցաբերման աշխատանքներ և մարտական հերթապահության բարոյահոգեբանական ապահովման վիճակի ստուգումներ: Իրականացված աշխատանքների արդյունքում 2023թ. համեմատ 2024թ-ին շուրջ 31%-ով նվազել են մահվան ելքով դեպքերը և շուրջ 17%-ով նվազել են ոչ կանոնագրքային փոխհարաբերությունները: Ամենօրյա ռեժիմով իրականացվել են պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի միջոցառումներ՝ զորամասերում զինծառայողների միջև կանոնագրքային փոխհարաբերությունների խախտման դեպքերը բացառելու, ինչպես նաև զորամասերում հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ: 2024թ. ընթացքում զորամասերի և մարտական հենակետերի պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի միջոցառումների ու անակնկալ ստուգայցերի թիվը կազմում է 6697: 2024թ. ընթացքում ստացված օպերատիվ տվյալների և ձեռնարկված միջոցառումների արդյունքում բացահայտվել է 502 դեպք, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ:		

		8.2 Սահմանված թվով զորամասերում հոգեբանական օգնության կետերի ու հոգեբանական հաղթահարման արգելագոտիների լրասարքավորում	Մի շարք զորամասերում լրակահավորվել և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ու գույքով են ապահովվել ստացիոնար հոգեբանական օգնության կետեր: Մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ իրականացվել են զորամասերի սպա-հոգեբանների վերապատրաստման դասընթացներ: Հոգեբանական հաղթահարման արգելագոտիների կահավորման նպատակով զորամասերին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդագործնական օգնություն, իրականացվել են հոգեբանական հաղթահարման արգելագոտու կահավորման աշխատանքներ:		
		8.3 «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023թ. ապրիլին:		
9.	Պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավում, արհեստավարժ զինվորական ծառայության համակարգի ընդլայնում	9.1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում	Շարունակվում է մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման գործընթացը: 2024թ. թվով 5 ատեստավորման կենտրոններում պլանավորվել և անցկացվել է 124 ատեստավորման գործընթաց, որին ընդգրկվել են 12907 զինծառայող: Ատեստավորմանը մասնակցած զինծառայողների 56 %-ը ստացել է դրական գնահատական: Համապատասխան կարգավորումներով ատեստավորման գործընթացում ընդգրկվելու հնարավորություն է ընձեռնվել նաև մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ չունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողներին: Շարունակվում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը: 2024թ. ծրագրի շահառու դառնալու համար ցանկություն է հայտնել և հրամանագրվել 1641 զինծառայող: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարտական պատրաստության գործընթացների վերանայման շրջանակներում աշխատանքներ են տարվում հրահանգիչների ինստիտուտի կայացման ուղղությամբ, իրականացվել է կրակային և մարտավարական պատրաստության շուրջ 100 հրահանգիչների պատրաստում: Զուգահեռաբար, արտասահմանյան գործընկեր երկրների հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվող փորձի փոխանակման		

			միջոցառումների համատեքստում իրականացվում են անձնակազմի վերապատրաստումներ՝ հրահանգիչներ պատրաստելու ուղղությամբ:		
10.	Միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնում	10.1 Շարունակել աշխատանքները ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերի պարզաբանման ուղղությամբ	Հաշվի առնելով ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության սառեցման հանգամանքը և առկա ռազմաքաղաքական ճգնաժամը ՀՀ զինված ուժերը չեն մասնակցել ՀԱՊԿ ձևաչափերի շրջանակներում համատեղ միջոցառումներին:		
		10.2 ՀՀ-ՌԴ համատեղ (միացյալ) և ՀԱՊԿ ուժերի մարտական կարողություններին զուգահեռ ամրապնդել ՀՀ ԶՈՒ փոխգործունակության մակարդակը	Այլ պետությունների և կազմակերպությունների հետ ՀՀ ԶՈՒ փոխգործունակության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները և խմբերը մասնակցել են շուրջ 7 զորավարժությունների և վարժանքների, այդ թվում նաև Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատարության հետ համատեղ ՀՀ-ում անցկացված է «Արծիվ գործընկեր-2024» զորավարժությանը: ՆԱՏՕ-ի Եվրոպայում դաշնակցային ուժերի գերագույն հրամանատարության օպերատիվ կարողությունների հայեցակարգի (ՕԿՀ) գնահատող խմբի կողմից իրականացվել են ՀՀ ԶՈՒ խաղաղապահ բրիգադի գումարտակի և ինժեներական դասակի ու շարժական հոսպիտալի՝ ՆԱՏՕ-ի ՕԿՀ-ի 2-րդ մակարդակի գնահատման աշխատանքները:		
		10.3 Իրականացնել բազմակողմ և երկկողմ ձևաչափով ռազմաքաղաքական խորհրդակցություններ	Վերաբացվել է ԱՄՆ-ի կողմից Հայաստանի համար օտարերկրյա ռազմական ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում 2025թ. նախատեսվում է 20 բժշկական ծառայության մեքենաների ձեռքբերում: Առաջին անգամ ԵՄ-ի կողմից Հայաստանի համար հաստատվել է Եվրոպական Խաղաղության Գործիքակազմի ծրագիրը, որով 2025թ. նախատեսվում է վրանային ավանի հատկացում: Իրականացվել են Պաշտպանության նախարարի, ԳՇ պետի և պաշտպանության նախարարի տեղակալների այցերը ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ղազախստան, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Բուլղարիա, Լյուքսեմբուրգ, Կատար, Հնդկաստան, Իտալիա, Չեխիա, Սլովակիա, Վրաստան, Կորեայի Հանրապետություն, ՉԺՀ և ՌԴ: Հայաստան են այցելել Վրաստանի, Ֆրանսիայի, Հունաստանի և Կիպրոսի պաշտպանության նախարարները, ԱՄՆ, ԵՄ և ՆԱՏՕ-ի մի շարք բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, կազմակերպվել են այլ պետությունների բարձրաստիճան զինվորական պատվիրակությունների այցեր: Կազմակերպվել են 120-ից ավելի հանդիպումներ տարբեր պետությունների և կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաների, դեսպանների և պատվիրակությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պաշտպանական խորհրդակցություններ Վրաստանի, Լիտվայի, Իտալիայի, Ֆրանսիայի,		

			Հնդկաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Գերմանիայի, Հունաստանի և Կիպրոսի պաշտպանական գերատեսչությունների հետ: Շարունակվել է գործընկերային պաշտպանական համագործակցությունը Հունաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Վրաստանի, Հնդկաստանի, Ղազախստանի և այլ երկրների հետ՝ ամենամյա երկկողմ պլանների շրջանակներում:		
		10.4 Ապահովել ՀՀ ԶՈՒ ներ-գրավվածությունը միջազգային գործողություններին	Ապահովվել է ՀՀ ԶՈ մասնագետների և ստորաբաժանումների մասնակցությունը Սիրիայում,Կոսովոյում և Լիբանանում միջազգային առաքելություններին: Նոյեմբերի վերջին Հալեպի ուղղությամբ սիրիական ընդդիմության ձեռնարկած հարձակողական գործողություններով պայմանավորված՝ որոշում է կայացվել ժամանակավորապես դադարեցնել ՀՀ ԶՈ մասնագետների մասնակցությունը Սիրիայում իրականացվող մարդասիրական առաքելությանը: Ս.թ. նոյեմբերի 29-ին հայ մասնագետները վերադարձել են ՀՀ:		
		10.5 Ապահովել ՀՀ պաշտպանության համակարգի բարեփոխումների խորհրդատվական ու փորձագիտական աջակցություն	Հայաստան-ՆԱՏՕ 1-ին Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի ամբողջացված տարբերակը ներկայացվել է հաստատման, սակայն ՆԱՏՕ-ի խորհրդի կողմից դեռևս չի հաստատվել՝ կոնսենսուսի բացակայության պատճառով: ՆԱՏՕ-ի «Պաշտպանական կրթության զարգացման» հայաստանյան ծրագրի 2024թ. համագործակցության պլանի շրջանակներում իրականացվել են ռազմակրթական համակարգի բարեփոխումների խորհրդատվական մի շարք այցեր: Երկկողմ համագործակցության շրջանակներում ՀՀ ԶՈՒ բարեփոխումների ուղղությամբ խորհրդատվական և փորձագիտական աջակցության միջոցառումներ են իրականացվել Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների հետ: Խորհրդատվական աջակցությունն ուղղվում է ՀՀ ԶՈՒ ղեկավարման համակարգի և կառուցվածքի, պաշտպանական պլանավորման, համազորային և ըստ զորատեսակների մարտական պատրաստության ծրագրերի վերանայման, սերժանտական համակարգի ներդրման, ՀԱՄ ներդրման, տարածքային պաշտպանության համակարգի ներդրման, ռազմական կրթության ծրագրերի վերանայման, նոր ՍՌՏ յուրացման ու ինտեգրման և այլ ուղղություններով:		
		10.6 Զարգացնել դաշնակից և գործընկեր երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը	Ռազմատեխնիկական համագործակցության ուղղությունների բազմազանեցման արդյունքում սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման ու նոր նմուշների ձեռքբերման նպատակով կնքվել են ՍՌՏ միջոցների մատակարարման պայմանագրեր մի շարք արտասահմանյան ընկերությունների հետ:		
11.	Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և բարեվարքության ամրապնդում	11.1 ՊՆ ՌՈՒՀ-ի ՍՈԲԿ-ում և ՀՇՖ-ում «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում»	ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի հրամանատարաշտաբային ինստիտուտում ներդրվել է «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում» կրթական ծրագիրը, իսկ ՍՈԲԿ-ում այն դեռ պիլոտային փուլում է:		

		կրթական ծրագրի և «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի վերանայված ծրագրի ներդրում			
		11.2 Կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով դասընթացների կազմակերպում, ԶՈՒ ստորաբաժանումներին քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում	Կազմակերպվել են պաշտպանության համակարգում կանանց դերի բարձրացմանն ուղղված համաժողովներ, միջոցառումներ՝ միջազգային փորձագետների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Զինված ուժերում կանանց ներգրավվածության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով որպես առանձին ստորաբաժանում կազմավորված կանանց գումարտակում ներկայումս համալրված է սպայական կազմի հաստիքների 77, ենթասպայական՝ 6, պայմանագրային շարքային՝ 15 և պարտադիր ժամկետային կազմի հաստիքների 40 տոկոսը:		
		11.3 Պաշտպանության ոլորտում մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում	Շարունակվել են պաշտպանության ոլորտում քաղաքացիական վերահսկողություն և մշտադիտարկում իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները՝ թափանցիկության, հաշվետվողականության և հասարակական վստահության ամրապնդման նպատակով:		
12.	Ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ և գերակայությունների մշակում և իրագործում, ռազմակրթական համակարգի մրցունակության բարձրացում,	12.1 Սահմանել ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության համար արժանիքահեն և մրցութային ճկուն ընթացակարգեր	Պաշտպանության նախարարի հրամանով սահմանվել են ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերը, հաստատվել են այդ կազմի ընտրության, թափուր պաշտոնների համալրման կարգերը:		
		12.2 Մշակել և ընդունել ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացմանն ուղղված ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց	Պլանավորվել, նախաձեռնվել և իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ - Կառավարության 2023թ. սեպտեմբերի 14-ի №1588-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն Կառավարության 2014թ. հոկտեմբերի 2-ի №1085-Ն որոշման մեջ, որով բարձրացվել են ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովության չափերը, ինչպես նաև սահմանվել են դրամական ապահովության չափերի ավելացում՝ ուսման առաջադիմությամբ պայմանավորված՝ և՛ ՀՀ, և՛ օտարերկրյա ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների համար,		

	ռազմական գիտու-թյան զարգացում		- Կառավարության 2022թ. հոկտեմբերի 27-ի №1665-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ռազմաուսումնական հաստատություն ավարտած և սպայական պաշտոնի նշանակված զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան, - Կառավարության 2023թ. փետրվարի 9-ի №162-Ն որոշմամբ սահմանվել է պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման կարգը, իսկ 2023թ. փետրվարի 9-ի №166-Ն որոշմամբ՝ այդ ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարների չափերը և վճարման կարգը, 2024թ. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն ատեստավորման միջոցով հավելավճար ստանալու իրավունք է սահմանվել նաև մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ չունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների համար, - գործող զինծառայողներից (այդ թվում նաև՝ կուրսանտների ընդգրկմամբ) ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնց անդամները պարբերաբար հանդիպումներ են ունենում Հանրապետության դպրոցների բարձր դասարանների աշակերտների հետ՝ վերջիններիս՝ ռազմական կրթություն ստանալու և զինվորականի մասնագիտությունն ընտրելու կողմորոշման նպատակով: Ռազմաուսումնական հաստատությունների կրթության առավելությունների և ընդունելության կարգի վերաբերյալ ներկայացվել են տեսանյութեր, ռազմական կրթության գրավչությունը բարձրացնող նյութեր:		
		12.3 Ռազմական գործողու-թյունների պլանավորման ու վարման ձևերի վերանայում	Կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքներով մշակվել և Անվտանգության խորհրդի որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետու-թյան զինված ուժերի կիրառման նոր պլանը:		
13.	Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգութ յան ոլորտի բարեփոխում: Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության,	13.1 Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ տեղեկատվական անվտանգության և կիբեռհարձակման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով	Տեղեկատվական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման, հրամանատարական կազմի կողմից տեղեկատվական անվտանգության գործընթացի ապահովման, զինծառայողների մեդիագրագիտության մակարդակի բարձրացման նպատակով և Հանրապետությունում մեկնարկած վարժական հավաքների շրջանակներում մասնակից անձնակազմի հետ ՊՆ զորամասերում պարբերաբար անցկացվել են «Տեղեկատվական անվտանգություն», «Գաղտնի տեղեկատվության արտահոսքի կանխարգելում» և «Ապատեղեկատվության դեմ պայքարը» թեմաներով մեթոդագործնական և «Մեդիագրագիտություն» թեմայով հրահանգչամեթոդական պարապմունքներ:		

	տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացում, օրենսդրական դաշտի կատարելագործում	կիբեռհարձակման դեպքերի արագ արձագանքման խմբերի ընդլայնում			
		13.2 Հանրային իրազեկ-վածության մակարդակի բարձրացում, թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին և հավանական հակառակորդի կողմից իրականացվող սոցիալական, ազգային, կրոնական ատելության, զինված ուժերի վարկաբեկմանն ուղղված քարոզչությանը հակազդելու գործընթացի ապահովում:	Ակտիվորեն լուսաբանվել և տարածվել են պաշտպանական բարեփոխումների շրջանակում իրականացվող ծրագրերը, մասնավորապես՝ զինվորական ծառայության գրավչության բարձրացման նպատակով զինված ուժերում ներդրված շարքային և սպայական կազմերի պայմանագրային զինվորական ծառայության անցման «Պաշտպան հայրենյաց» ծրագրի, զինծառայողների ատեստավորման, ՀՀ զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումների համալրման, պահեստազորայինների վարժական հավաքների, զինծառայողների բնակարանային ապահովման և 18-27 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների կամավոր հիմունքներով պարտադիր 6-ամսյա ժամկետային ծառայության վերաբերյալ: ՊՆ կայքէջի լրահոսում 2024թ. տեղադրվել է 600 նյութ: ՊՆ պաշտոնական կայքում և սոցցանցերի պաշտոնական էջերում (Facebook, Instagram, Twitter, Telegram, TikTok, WhatsApp) հրապարակվել է տեղեկատվություն ՊՆ ղեկավար կազմի պաշտոնական հանդիպումների, այցերի, այլ միջոցառումների, առօրյա ծառայության, զինված ուժերում արձանագրված դեպքերի վերաբերյալ: Հրապարակվել են նաև սահմանային միջադեպերի վերաբերյալ ադրբեջանական կողմի ապատեղեկատվությանը, ինչպես նաև ԶԼՄ-ներում և սոցցանցերում շրջանառվող կեղծ տեղեկություններին հակազդող հաղորդագրություններ: Աջակցություն է ցուցաբերվել ՊՆ-ում հավատարմագրված ԶԼՄ-ների ներկայացուցիչներին ՀՀ զինված ուժերի մասին ռեպորտաժների, թեմատիկ հաղորդումների պատրաստմանը: Իրականացվել են ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումներ և հրահանգավորման աշխատանքներ: Կազմակերպվել են ՊՆ-ում հավատարմագրված ԶԼՄ-ների ներկայացուցիչների այցելություններ զորամասեր և ԶՈՒ ամրացված շրջաններ, սահմանագոտի՝ տեղում ծանոթանալու սահմանային ու թիկունքային պահպանության տեղամասերում իրականացվող աշխատանքների ընթացքին: Այցելության շրջանակում կազմակերպվել է ԶԼՄ ներկայացուցիչների հետ պաշտպանության նախարարի փակ հանդիպում-քննարկումը: Կազմակերպվել են «Քայլ դեպի տուն» ծրագրի շրջանակում Հայաստան ժամանած սփյուռքահայ պատանիների և երիտասարդների այցելությունները Վ.Սարգսյանի անվան ՌԱ և ՊՆ «Եռաբլուր» զինվորական պանթեոն-հուշահամալիր:		
14.	Սոցիալական պաշտպանության ապահովման և կենսաթոշակային ոլորտը կարգա-	14.1 Ապահովել «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական նպատակային ծրագրի իրականացման հասանելիությունն ու շարունա-	2024թ. ծրագրում ընդգրկվելու նպատակով ներկայացվել է 1488 դիմում-հայտ, որոնցից ծրագրի պահանջներին բավարարել է 1478-ը: Ծրագրում ընդգրկվելու առաջնահերթությունից օգտվել են 172 շահառուներ: Վիճակահանությանը մասնակցել է համակարգի 1306 զինծառայող, որի արդյունքներով 328 զինծառայող ընդգրկվել են վարկավորման ծրագրում:		

	վորող իրավական դաշտի կատա-ռելագործում, սոցի-ալական երաշ-խիքների ընդլայնում և զինվորական ծառայության գրավ-չության ապահովում	կականությունը, նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը	Բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ կառուցապատման նպատակով հատկացվել է 315 կանխավճար, որից 13-ը՝ 2023թ. ծրագրի շահառուների մասով: Բնակարան կամ բնակելի տուն են ձեռք բերել կամ կառուցապատման պայմանագիր են կնքել 303 զինծառայող: Իրականացվել է 1667 շահառուի հիփոթեքային վարկերի տոկոսների սուբսիդավորում: Լրացուցիչ երաշխիքների գծով մայր գու-մարի մարման նպատակով 47 շահառուի հատկացվել է պետական աջակցություն: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023 թվականից բնակարանային հաշվառման ընդգրկված զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն է տրամադրվում բնակարանի գնման վկայագրի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսված գումարի շրջանակներում ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից 68 զինծառայողի տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, 53 զինծառայող արդեն իսկ առուվաճառքի պայմանագրի միջոցով ձեռք է բերել բնակարան: Բնակարանի գնման վկայագրերը տրամադրվում են մեկ տարի ժամկետով:		
		14.2 Մարտական խնդիրներ իրականացնող գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հավելավճար սահմանելու նպատակով օրենսդրական փոփոխություն-ների փաթեթի մշակում	Օրենքներն ընդունվել են 2022թ. դեկտեմբերին: Ներդրվել է մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների ատեստավորման նոր համակարգը և դրա արդյունքներով սահմանվել է հավելավճարների համակարգ: 2024թ. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն ատեստավորման միջոցով հավելավճար ստանալու իրավունք է սահմանվել նաև մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ չունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների համար:		
		14.3 Աշխատանքային կենսաթոշակ կամ նպաստ ստանալու իրավունք ունեցող՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների համար ամենամսյա պարգևավճար սահմանելու նպատակով	Նախատեսված օրենքն ընդունվել է 2023թ.:		

		«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում			
		14.4 «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնաս-ների հատուցման մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում	Նախատեսված օրենքներն ընդունվել են 2022-23թթ.: 2024թ. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներով ամրագրվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող և պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիների զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված զորամասերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու և ոչ ավելի, քան «փոխգնդապետ» կոչումային դասակարգմամբ զինվորական պաշտոնի նշանակելու դեպքում: ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատվել է զորամասերի ցանկը, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել համապատասխան հրամաններում՝ առաջնորդվելու համար:		
		14.5 Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանա-գրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական արտոնություններ և երաշխիքներ սահմանելու նպատակով համապատասխան օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներով պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների համար գործում է ատեստավորման համակարգ, որը նախատեսում է հավելավճարների տրամադրում ատեստավորումը հաջողությամբ հանձնած զինծառայողների համար: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն ատեստավորման միջոցով հավելավճար ստանալու իրավունք է սահմանվել նաև մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ չունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների համար:		